## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
## Ա Ր Մ Ա Վ Ի Ր Ի   Մ Ա Ր Զ Պ Ե Տ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

*<<27>> [illegible] 2021թ.* *ՆՄՈ/126 2021*

*ք. Արմավիր*

### *ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՀԱՄԱՅՆՔՆԵՐՈՒՄ 2021 ԹՎԱԿԱՆԻ ԵՐԿՐՈՐԴ ԵՌԱՄՍՅԱԿԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԻՐԱՎԱԿԱՆ ՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 96-րդ և 98-րդ հոդվածներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 2020 թվականի դեկտեմբերի 1-ի N1776-Ա հրամանը, 2020 թվականի ապրիլի 17-ի NՍՊ/20.1/10461-2020 և դեկտեմբերի 2-ի NՍՊ/20.1/33534-2020 գրությունները.

*որոշում եմ՝*

1. Հաստատել 2021 թվականին Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի համայնքներում իրականացվելիք իրավական հսկողության բնագավառը, ժամանակահատվածը, իրավական հսկողություն իրականացնող աշխատանքային խմբերի կազմերը՝ համաձայն NN1-2 հավելվածների:
2. Իրավական հսկողության իրականացման գործընթացում ղեկավարվել Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 2020 ապրիլի 9-ի N03-Ն որոշմամբ հաստատված տեղական ինքնակառավարման մարմինների սեփական լիազորությունների իրականացման նկատմամբ իրավական հսկողության հարցաշարով:
3. Անհրաժեշտության դեպքում իրավական հսկողության աշխատանքային խմբում ներգրավել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի համապատասխան ստորաբաժանումների այլ մասնագետների:
4. Աշխատանքային խմբերի ղեկավարներին՝ յուրաքանչյուր համայնքում իրավական հսկողություն իրականացնելուց հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում, իրավական հսկողության բարձրագույն մարմնի կողմից հաստատված օրինակելի ձևին համապատասխան կազմել արձանագրություն:

5. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի տեղական ինքնակառավարման և հանրապետական գործադիր մարմինների հարցերով վարչության պետ Ն. Պետրոսյանին՝ երկրորդ եռամսյակին հաջորդող ամսվա առաջին տասնօրյակում Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն ներկայացնել տվյալ եռամսյակում իրականացված իրավական հսկողության արդյունքում կազմված արձանագրությունները:
6. Սույն որոշման կատարման հսկողությունը վերապահել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի տեղակալ Ա. Մեխակյանին:
7. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի վարչատնտեսական բաժնի պետին (Ա. Համբարձումյանին)՝ հանձնաժողովի աշխատանքների իրականացման համար տրամադրել հերթապահ ավտոմեքենա:
8. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետին (Վ. Մկրտչյան)՝ սահմանված կարգով իրականացնել գործուղման օրապահիկի վճարումը:
9. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՄԱՐԶՊԵՏ՝ Հ. ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

Недействительная подпись

VERIFIED OCSP 27.04.2021 11:12:17 GMT+4

Подписано: MATEVOSYAN HAMBARDZUM 2809920230

Հավելված N1
Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի
2021 թվականի ապրիլի 27-ի
N ՄՊ126-2021 որոշման

2021 թվականի երկրորդ եռամսյակի Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի համայնքներում իրականացվելիք իրավական հսկողության բնագավառը, իրավական հսկողություն իրականացնող աշխատանքային խմբի կազմը

<table>
<tr><th rowspan="2">հ/հ</th><th rowspan="2">Համայնքի անվանում</th><th rowspan="2">Իրականացվելիք վարչական հսկողության ժամանակահատվածը</th><th rowspan="2">Իրականացվելիք վարչական հսկողության բնագավառ</th><th colspan="2">Վարչական հսկողություն իրականացնող պաշտոնատար անձիք</th></tr>
<tr><th>Զբաղեցրած պաշտոն (աշխատանքային խմբի ղեկավար, անդամ)</th><th>Անուն, ազգանուն</th></tr>
<tr><td>1.</td><td>Նորապատ համայնք</td><td>5 աշխատանքային օր</td><td rowspan="5">Համայնքի ավագանու և համայնքի ղեկավարի ընդհանուր լիազորությունների բնագավառ, այդ թվում՝ համայնքի ղեկավարի լիազորությունները՝<br><br>քաղաքացիների, փնտեսավարող սուբյեկտների իրավունքների, տեղական ինքնակառավարմանը բնակիչների մասնակցության<br><br>ֆինանսների<br><br>պաշտպանության կազմակերպման և արտակարգ իրավիճակներից բնակչության պաշտպանության և քաղաքացիական պաշտպանության կազմակերպման<br><br>քաղաքաշինության, կոմունալ տնտեսության և հողօգտագործման</td><td rowspan="5">Աշխատանքային խմբի ղեկավար՝<br><br>Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի ՏԻ և ՀԳՄ հարցերով վարչության հանրապետական գործադիր մարմինների տարածքային ստորաբաժանումների գործունեության համակարգման բաժնի պետ.<br><br>Աշխատանքային խմբի անդամներ՝<br><br>Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի քաղաքաշինության վարչության գլխավոր ճարտարագետ-շինարարի պաշտոնակատար.<br><br>Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության</td><td rowspan="5">Գ. Գևորգյան<br><br>Գ. Հովհաննիսյան<br><br>Ս. Սաֆարյան</td></tr>
<tr><td>2.</td><td>Մեծամոր գ. համայնք</td><td>5 աշխատանքային օր</td></tr>
<tr><td>3.</td><td>Տանձուտ համայնք</td><td>10 աշխատանքային օր</td></tr>
<tr><td>4.</td><td>Արտիմետ համայնք</td><td>5 աշխատանքային օր</td></tr>
<tr><td>5</td><td>Ալաշկերտ համայնք</td><td>5 աշխատանքային օր</td></tr>
</table>

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | *տրանսպորտի, առևտրի և ծառայությունների* | ֆինանսատնտեսագիտական բաժնի ավագ մասնագետ. | |
| | | | *կրթության, մշակույթի, երիտասարդության հետ տարվող աշխատանքների, ֆիզիկական կուլտուրայի և սպորտի* | Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի հողաշինության և հողօգտագործման բաժին-մարզային հողային պետական տեսչության բաժնի ավագ մասնագետ | Ս. Չալյան |
| | | | *առողջապահության* | | |
| | | | *սոցիալական պաշտպանության* | Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի իրավաբանական բաժնի գլխավոր մասնագետի պաշտոնակատար | Ա. Մուրադյան |
| | | | *գյուղատնտեսության, անասնաբուժության և բուսասանիտարիայի* | Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության գլխավոր մասնագետ | Վ. Ալեքսանյան |
| | | | *շրջակա միջավայրի պահպանության և զբոսաշրջության* | | |

*ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝* *Ա. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ*

27.04.2021

X

VERIFIED OCSP 27.04.2021 11:08:19 GMT+4

Подписано: HOVHANNISYAN ARAM 3812640023

Հավելված N2
Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի
2021 թվականի ապրիլի 27-ի
N ՄՌ/126 2021 որոշման

**2021 թվականի երկրորդ եռամսյակի Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի համայնքներում իրականացվելիք իրավական հսկողության բնագավառը, իրավական հսկողություն իրականացնող աշխատանքային խմբի կազմը**

<table>
<tr><th rowspan="2">հ/հ</th><th rowspan="2">Համայնքի անվանում</th><th rowspan="2">Իրականացվելիք վարչական հսկողության ժամանակահատվածը</th><th rowspan="2">Իրականացվելիք վարչական հսկողության բնագավառ</th><th colspan="2">Վարչական հսկողություն իրականացնող պաշտոնատար անձիք</th></tr>
<tr><th>Զբաղեցրած պաշտոն (աշխատանքային խմբի ղեկավար, անդամ)</th><th>Անուն, ազգանուն</th></tr>
<tr><td>1.</td><td>Խանջյան համայնք</td><td>5 աշխատանքային օր</td><td rowspan="5">Համայնքի ավագանու և համայնքի ղեկավարի ընդհանուր լիազորությունների բնագավառ, այդ թվում՝ համայնքի ղեկավարի լիազորությունները՝<br><br>քաղաքացիների, տնտեսավարող սուբյեկտների իրավունքների, տեղական ինքնակառավարմանը բնակիչների մասնակցության<br><br>ֆինանսների<br><br>պաշտպանության կազմակերպման և արտակարգ իրավիճակներից բնակչության պաշտպանության և քաղաքացիական պաշտպանության կազմակերպման<br><br>քաղաքաշինության, կոմունալ տնտեսության և հողօգտագործման</td><td rowspan="5">Աշխատանքային խմբի ղեկավար՝<br><br>Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության հաշվապահական հաշվառման բաժնի պետ<br><br>Աշխատանքային խմբի անդամներ՝<br><br>Հանրապետության Արմավիրի մարզպետարանի քաղաքաշինության վարչության գլխավոր ինժիներ<br><br>Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի ՏԻ և ՀԳՄ հարցերով վարչության ՏԻ և համայնքային ծառայության հարցերի բաժնի գլխավոր մասնագետ<br><br>Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի հողաշինության և հողօգտագործման բաժին-մարզային հողային պետական տեսչության բաժնի պետ</td><td rowspan="5">Ա. Հակոբյան<br><br>Հ. Էքիզյան<br><br>Ա. Ավչյան<br><br>Ա. Դարբինյան</td></tr>
<tr><td>2.</td><td>Ջանֆիդա համայնք</td><td>10 աշխատանքային օր</td></tr>
<tr><td>3.</td><td>Տալվորիկ համայնք</td><td>5 աշխատանքային օր</td></tr>
<tr><td>4.</td><td>Լեռնամերձ համայնք</td><td>5 աշխատանքային օր</td></tr>
<tr><td>5.</td><td>Ծաղկալանջ Համայնք</td><td>5 աշխատանքային օր</td></tr>
</table>

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | տրանսպորտի, առևտրի և ծառայությունների<br><br>կրթության, մշակույթի, երիտասարդության հետ տարվող աշխատանքների, ֆիզիկական կուլտուրայի և սպորտի<br><br>առողջապահության<br><br>սոցիալական պաշտպանության<br><br>գյուղատնտեսության, անասնաբուժության և բուսասանիտարիայի<br><br>շրջակա միջավայրի պահպանության և զբոսաշրջության | Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի իրավաբանական բաժնի ավագ մասնագետի պաշտոնակատար<br><br>Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության պետ | Ա. Սարգսյան<br><br>Հ. Հարությունյան |

ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Ա. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

27.04.2021

X

VERIFIED OCSP 27.04.2021 11:09:30 GMT+4

Подписано: HOVHANNISYAN ARAM 3812640023